МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **08.01.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-23/58
(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների արտաքին լուսավորման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 10-ին տեղեկագրում հրապարակվել է «ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-23/58» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթակարգ):

Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցության հայտեր են ներկայացվել Ա/Ձ Կատյա Նազարեթյանի (ՀՎՀՀ՝ 57271907) և «Բերդուս» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 08416714) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի նոյեմբերի 23-ի 2-րդ նիստի արձանագրության 5-րդ կետով Ա/Ձ Կատյա Նազարեթյանի և «Բերդուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտերի փաթեթներում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Հանձնաժողովի նույն նիստի արձանագրության 6-րդ կետով գնման ընթացակարգը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերին համաձայն կասեցվել է, իսկ մասնակիցներին ներկայացվել են հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումներ:

Հանձնաժողովի հաջորդ՝ 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի արձանագրության 7.2 կետով արձանագրվել է, որ մասնակիցներին հատկացված մեկ աշխատանքային օրում

արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, իսկ 10-րդ կետով՝ հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը, որոշվել է Ա/Ձ Կատյա Նազարեթյանի և «Բերդուս» ՍՊ ընկերության տվյալները ներկայացնել լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ա/Ձ Կատյա Նազարեթյանին և «Բերդուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակիցներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ